Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/03» ծածկագրով Դեղորայքի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի

20.10.2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ս. Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն

Անդամներ

Ա. Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ

Հ. Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. **ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/03 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շտկման ենթակա փաստաթղթերի գնահատման վերաբերյալ**

(Ս. Խաչատրյան)

Հիմք ընդունելով «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով բացակայում է 27-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և առաջնորդվելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ հանձնաժողովը աճուրդն ամփոփվելուց հետո որոշում էր կայացրել 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունը:

Վերջինիս կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգ է ներմուծվել շտկման ենթակա ապրանքի ամբողջական նկարագիրը, «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված ապրանքի տեխնիկական բնութագիր՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, համապատասխանում է հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝ մասնակցի հայտը գնահատել բավարար և ներկայացնել հետագա գնահատման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. **Մասնակիցների առաջարկած գների մասին**

(Ս. Խաչատրյան)

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում են կից հավելվածով.

Համաձայն կից ներկայացված գնային առաջարկների հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18 մայիսի 2017թվականի թիվ 534-Ն որոշման 19-րդ կետի 1-ին ենթակետը՝ Համակարգի կողմից մերժվել են Մասնակիցների հայտերը 1-9-րդ, 11-րդ, 14-րդ, 16-րդ, 24-րդ, 26-րդ, 33-րդ, 34-րդ, 45-րդ, 52-րդ, 58-րդ և 66-րդ չափաբաժինների մասով, քանի որ ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի շրջանակներում գնվելիք ապրանքների ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գնման գները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. **Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին**

(Ս. Խաչատրյան)

«ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/03» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման ապրանքների բնութագրի՝ օրենքով սահմանված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ –0

4. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/03» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցների, չկայացած չափաբաժինների մասին

(Ս. Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/03» ծածկագրով կազմակերպված ԷԱՃ ընթացակարգում ընտրված մասնակիցներ ճանաչել

- **«Արֆարմացիա» ՓԲԸ**-ին - **10, 13, 17, 18, 19, 22-րդ, 55-րդ և 69-րդ** չափաբաժինների մասով:
- **«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ** -ին - **46-րդ և 47-րդ** չափաբաժինների մասով:
- **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ**-ին - **12, 15, 21, 28, 29, 31, 32, 35, 36, 37, 38, 40, 41, 42, 43, 44, 48, 49, 50, 51, 53, 56, 59, 60, 63, 64, 67, 71, 74, 76, 77-րդ և 78-րդ** չափաբաժինների մասով:
- **«Ֆարմասերվիս» ՍՊԸ**-ին - **25-րդ և 30-րդ** չափաբաժինների մասով:
- **«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ**-ին - **20-րդ և 70-րդ** չափաբաժինների մասով:
- **«Տոնուս-Լես» ՍՊԸ**-ին - **72-րդ** չափաբաժնի մասով:
- **«Լուարտ» ՍՊԸ**-ին - **79-րդ** չափաբաժնի մասով:
- **«Իվաֆարմ» ՍՊԸ**-ին - **23, 57, 68-րդ և 73-րդ** չափաբաժինների մասով:
- **«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ին - **27-րդ** չափաբաժնի մասով:

4.2 ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-26/03 ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-26/03 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած 1-9-րդ, 11-րդ, 14-րդ, 16-րդ, 24-րդ, 26-րդ, 33-րդ, 34-րդ, 45-րդ, 52-րդ, 58-րդ և 66-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև հայտարարել չկայացած 39-րդ, 54-րդ, 60-րդ, 61-րդ, 62-րդ, 65-րդ և 75-րդ չափաբաժինների մասով՝ վերոնշյալ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/03» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին

(Ս. Խաչատրյան)

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս.Խաչատրյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Սիմոնյան**

_____ **Հ.Գաբրիելյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ.Բազիկյան**